Թեստ 2

1-12-րդ առաջադրանքները կարող են ունենալ ճիշտ պատասխանի մեկ կամ մի քանի տարբերակ

1. Ու ձայնավորի հնչյունափոխություն կա

1) գուժկան
2) նշածող
3) շնագայլ
4) գինետուն

բառում:

2. Բոլոր բառերի բաց թողած տեղերում միևնույն տառը գրվող շարքն է(փակագծերում նշվածներից որևէ մեկը)՝

1) տարեր..., պատարա..., ոռո...ել (գ կամ ք)
2) վար...ակ, որ...աքար, ապաթար... (ձ կամ ց)
3) փայտո...իլ, զդ...ալ, գեղ...ել (ջ կամ չ)
4) դ...պատեհ, խա...ակն, հու...կու (ժ կամ շ)

3. Բոլոր բառերի բաղադրիչները անջատ գրվող շարքն է՝

1) ծայրից (ծայր), ալ (կարմիր), առոք (փառոք)
2) գլուխ (բերել), երեք (գլխանի), երեք (հարյուր)
3) ըստ (երևույթին), հայ (իտալական), հոդս (ցնդել)
4) ի (հեճուկս), մեջք (մեջքի), հին (հունարեն)

4. Դարձվածքի բացատրության սխալ կա

1) կոկորդը սեղմել-համբերել, զսպել իրեն
2) գլուխ կոտրել-մի բանի վրա չարչարվել
3) ափերից դուրս գալ-զայրանալ
4) ոտքի ելնել-թևակոխել

շարքում:

5. Ածանցավոր բառերի շարքն է՝

1) հասուն, մետաքս, արձան
2) ձգան, գողոն, ապառաժ
3) նարնջագույն, ճշգրիտ, անախորժ
4) գուժկան, նզովք, հեղհեղուկ

6. Հոմանիշ բառերի շարքն է՝

1) թովել, դյութել, վրիպել
2) անարատ, անաղարտ, մաքուր
3) թալկանալ, նվաղել, հայցել
4) հլու, հնազանդ, խելամիտ

7. Թվականների շարքն է՝

1) երեսունական, երկրորդ, քառակի
2) երեքական, մեկ-մեկ, երկու երրորդ
3) վաթսունական, յոթ-ութ, հարյուր հինգ
4) իններորդ, քսան-քսան, հազարավոր

8. Մակբայ կա

1) Մոռացա բոլոր հոգսերն առօրյա...
2) Ցուրտ քամին արդեն պուրակ է մտնում:
3) Ես սիրում եմ մթնշաղը նրբակերտ...
4) Ես մտերմաբար ժպտացի նրան:

նախադասության մեջ:

9. Վերաբերական կա

1) Երկարեց գիշերն այս գարնանային....
2) Գետը հոսում է դանդաղ....
3) Կարծես թե սիրո քնքուշ խոսք ասաց....
4) Որպես տիկին միշտ եղել է շռայլ հյուրասեր:

նախադասության մեջ:

10. *Կրունկս սկսեց ծակծկել, և ես հասկացա, որ երբ գնացքից ցատկել էի, կրունկս կոտրել էր ջրափոսի սառույցը, թրջվել,.....*

նախադասության քերականական և տրամաբանական շարունակության տարբերակն է՝

1) ծակծկոցների պատճառ դառնալով:
2) ջրափոսի մեջ մտնելիս:
3) հետո ճանապարհին ցրտահարվել էր:
4) ցավը մանր ցոլքերով խփվեց ոսկորի պատերին:

11. Համեմատություն պարունակող հատվածն է՝

1) Ամպերը դարձել գթության քույրեր,
Ձրվեժի վրա ջուր են շաղ տալիս,
Որ ուշքի բերեն:
2) Աչքերը սև - արևներ սև,
Արևների պես անշեջ,
Գալարում էր մեջքը թեթև
Ծաղկանկար շալի մեջ:
3) Ամեն ինչ այնպես անդորր է ու կույս,
Որ չեմ հավատում կարմիր երազին,
Միրաժի նման փարվում է հոգուս
Անէ աշխարհի քնքշությունը հին:
4) Սիրտս անուշ խոցեցիր
Արևավառ քո սիրով:

12. Կետադրական սխալ կա

1) Պատահական չէ, որ նրա Օշական գյուղում գտնվող համեստ շիրիմն այսօր էլ հայ ժողովրդի սրբության սրբոցն է:
2) Առեղծված է մեր սիրտը, այսինքն՝ մեր զգացմունքների մեծ ու խորունկ աշխարհը:
3) Դիմացի տան պատուհանին մի հայացք գցելով, արագ, մեծ քայլերով Արմենը անցավ փողոցը:
4) Վերջապես հասկացան, որ իրենց թույլ տված սխալները համառորեն չընդունելով՝ կկանգնեն փակուղու առաջ:

նախադասության մեջ:

13-16-րդ առաջադրանքներում գրի՛ր պատասխանը

13. Նախադասությունները դասավորի՛ր տրամաբանական հաջորդականությամբ:
Գրի՛ր միայն նախադասությունների համարները:

1. Եվ այդ նշան-պատկերները կոչվում էին հիերոգլիֆներ, որոնց քանակը հասնում էր մոտ 750-ի, և դրանք փորագրում էին քարի, փայտի, նաև պապիրուսի վրա:
2. Գրի ստեղծումը դարձավ պահանջ, սակայն սկզբնական գիրը ուղղակի բառի պարզագույն նկարն էր, ինչպես արևը, որ պատկերվում էր կենտրոնում կետ ունեցող շրջանի նշանով:
3. Մ.թ.ա 4-րդ հազարամյակում եգիպտացիների գիտելիքներն այնքան շատ էին, որ դրանց բանավոր փոխանցումը սերնդեսերունդ դառնում էր անհնարին:
4. Հետագայում նշանով սկսեցին արտահայտել ոչ միայն առանձին բառեր, այլև մեկ կամ մի քանի բաղաձայն հնչյուններ՝ բաց թողնելով ձայնավորները:

Պատասխան _____

14. Գտի՛ր նախադասության մեջ թույլ տրված բառագործածության սխալը և ուղղի՛ր:

Հայ ժողովրդի կյանքում տնօրհնեքի ավանդությունը վաղ ժամանակից է գործում:

Պատասխան՝ սխալ է _____
պետք է լինի _____

15. Գտի՛ր նախադասության մեջ թույլ տրված քերականական սխալը և ուղղի՛ր:

Հյուրընկալվեցինք ծանոթներից մեկի տանը, որն էլ մեր համար անակնկալ էր պատրաստել:

Պատասխան՝ *սխալ է* _____
պետք է լինի _____

16. Տրված բառերը տեղադրի՛ր բաց թողնված տեղերում՝ ենթարկելով համապատասխան փոփոխությունների:

.....պիտի հասկանանք և ..... երբեք, որ մեր .....թողած ..... մեծագույն գանձը հայոց լեզուն է:
(1. նախնի, 2. ժառանգություն, 3. ես, 4. մոռանալ)

Պատասխան՝ 1.---------- *2.*----------

3.---------- *4.*----------

17-32-րդ առաջադրանքները կատարի՛ր ըստ տեքստի

Կարդա՛ տեքստը և կատարի՛ր առաջադրանքները:

I

1. Բյուզանդիայի հին աշխարհի ամենահզոր պետության մայրաքաղաքը՝ Կոստանդնուպոլիսը, հերթական եռուզեռի մեջ էր. երկրագնդի ամենատարբեր ծագերից մրցելու էր հավաքվել իմաստասերների ու գիտունների մի հոծ խումբ: 2. Հայաստան աշխարհից այստեղ էր եկել քերթողահայր Մովսես Խորենացու քրոջորդին՝ Դավիթը:

3. Կամարազարդ դահլիճում շքեղ թիկնօթոցների մեջ, շուրջանակի բազմել էին սպիտակամորուս գիտունները, որոնց տարաբնույթ ու առեղծվածային հարցերը մեկը մյուսի հետևից պարտության էին մատնում իմաստասերներին. նրանցից և ոչ մեկը չկարողացավ հասնել հաղթական ավարտի:

4. Հերթը Դավթինն էր: 5. Անպատասխան չթողնելով և ոչ մի հարց չորս ժամ անընդմեջ նա մեկնաբանեց բյուզանդացի գիտունների խորախորհուրդ հարցերը՝ հիացնելով իր խելամտությամբ, պերճախոսությամբ ու բացառիկ իմացությամբ: 6. Թվաց հաղթանակն ապահովված է, սակայն մրցավեճի ղեկավարը՝ ընդգծված այտոսկրերով պատկառազդու մի ծերունի, բարձրացավ գահույքից և խորաթափանց հայացքն ուղղելով Դավթին՝ ասաց.

--- Դու փայլեցիր քո գիտակությամբ, Դավի՛թ, ապշեցրիր քո խելքով:7. Մնաց մի պայման. եթե առանց հապաղելու պատասխանես իմ վերջին հարցին, ապա քեզ կօծենք մեծ իմաստասեր:

II

1. Այն ի՞նչն է, որից մարդը երբեք չի ձանձրանում:

2. Դավիթը խոր ակնածանքով խոնարհեց գլուխը ծեր իմաստունի առջև (դա նշան էր, որ ընդունեց հարցը), ապա առանց վարանելու՝ համարձակ ու ինքնավստահ պատասխանեց.

3. --- Հացը: 4. Բոլոր ուտեստները, որքան էլ համեղ ու համադամ լինեն, կարող են ի վերջո ձանձրացնել, իսկ հացը երբեք: 5. Հացը մարդուն պետք է ամեն օր, այն մարդու հանապազօրյա ոտելիքն է:

6. Հացից աշխարհում չի ձանձրացել և ոչ մեկը:

7. Համրացած դահլիճը թնդաց որոտընդոստ ծափերից: 8. Բոլորը հոտնկայս բացականչեցին.

--- Նա անհա՛ղթ է, Դավիթն անհա՛ղթ է:

9. Այդ մրցավեճից հետո հայ իմաստասերը կնքվեց Դավիթ Անհաղթ անունով:

17-20-րդ առաջադրանքներում գրի՛ր պատասխանը

17. I հատվածից դու՛րս գրիր կոչականը:

Պատասխան՝ _____

18. I հատվածից դու՛րս գրիր ենթադրական եղանակի բայը:

Պատասխան՝ _____

19. I հատվածից դու՛րս գրիր մեկ անհոդակապ բարդ բառ:

Պատասխան՝ _____

20. II հատվածից դու՛րս գրիր մեկ բարդաձանցավոր բառ:

Պատասխան՝ _____

21-25-րդ առաջադրանքները կարող են ունենալ ճիշտ պատասխանի մեկ կամ մի քանի տարբերակ

21. Գերադրական աստիճանով դրված ածական է՝

1) շքեղ
2) խորախորհուրդ
3) ամենահզոր
4) հոտնկայս

22. II հատվածում կապ խոսքի մաս պարունակող նախադասություն է՝

1) 6
2) 7
3) 8
4) 9

23. II հատվածում գեղչված ստորոգյալով նախադասություն է՝

1) 2
2) 4
3) 5
4) 8

24. Անորոշ դերբայ պարունակող նախադասություն է՝

1) I. 1
2) I. 2
3) II. 5
4) II. 6

25. I. 6 բարդ նախադասության պարզ նախադասությունների քանակն է՝

1) 4
2) 5
3) 6
4) 7

26-29-րդ առաջադրանքներում գրի՛ր պատասխանը

26. Տեքստից դու՛րս գրիր ժխտական դերանունները:

Պատասխան՝ _____

27. II հատվածից դու՛րս գրիր կրավորական բայը:

Պատասխան՝ _____

28. Տեքստից դու՛րս գրիր ստորադասական շաղկապները:

Պատասխան _____

29. Գրի՛ր II հատվածի այն նախադասության համարը, որում հարակատար դերբայ կա:

Պատասխան _____

30-32-րդ առարադրանքները կարող են ունենալ ճիշտ պատասխանի մեկ կամ մի քանի տարբերակ

30. Տեքստից չբխող կամ նրա բովանդակությանը հակասող միտքն է՝

1) Բյուզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլսում մրցում էին իմաստասերներն ու գիտունները:
2) Մովսես Խորենացու քրոջորդի Դավիթը մասնակցում էր մրցույթին:
3) Նա իր խելքով ապշեցրեց բոլորին ու կնքվեց Դավիթ Անհաղթ անունով:
4) Բացի հանապազօրյա ուտելիքից, Դավիթը խոսեց նաև հոգևոր հացից:

31. *Դավիթը խոնարհեց գլուխը ծեր իմաստունի առջև*

նախադասության անդամներից որի՞ ձևաբանական վերլուծության մեջ սխալ կա:

1) Դավիթը - հատուկ անուն, ուղղական հոլով
2) ծեր – որակական ածական
3) խոնարհեց - բայ, սահմանական եղանակ
4) առջև - վերաբերական

32. *Հացից* աշխարհում չի ծանձրացել և ոչ մեկը

նախադասության մեջ ընդգծված բառի կատարած պաշտոնն է՝

1) անջատման անուղղակի խնդիր
2) հանգման անուղղակի խնդիր
3) ուղիղ խնդիր
4) ներգործող խնդիր